թեան մէջ կասպարիզէին, որոնց մեծ մասը բունած էր Մէրճանի Եալտրզ խանը չուկայի մեծ Բէպէճի խանն և Վալիտէ ու Մեծ Նոր խաները։ Այս օտաճիներուն ջոջերը տարին 60-70000 հատոր պասմայ և կտաւ կըսպառէին իւրաքանչիւրը. իսկ գաւառի մէջ նոյն միջոցները՝ գլխաւորապէս Կեսարիա, միջնորդ բանուկ կենդրոն մըն էր մանիֆաթուրայի և ուրիշ վաճառաց, ուրկէ Սեբաստիա, Ատանա, Թօքատ, Եոզկաթ, Ակն, մինչեւ Կարի՛ն անգամ կը հոգային առ տեղեան իրենց պէտքը՝ Կիւլպէնկեանց, Մանուկեանց, Ցրէնկեանց, Կիւմիւշեանց Եայլոց ձեռքով՝ այնպէս որ մինչեւ 1870 կ. Պոլսական մանիֆաթուրայի հրապարակին վրայ հաղիւ քանի մը օտարազգի վաճառականներ մնացած էին հինէն, մնացածն ըլլալով մեծ մասամբ հայ։ Այս նախամասնութիւնը կաճեցունէին ի Կ. Պոլիս և ի գաւառս՝ գլխաւորապէս Կեսարացի թուրքախօս վաճառականք և յանձնակատարք, որ գործի պայքարին մէջ՝ իրրու նոր Գաթալաններ՝ ամէն ուրեք կընթացունէին ամուր չարքաշ և անընդհատ վաճառականութիւն մը՝ արդիւնք իրենց տոկուն եւ գործնական բնաւորութեան, սակաւապէտ ու անտեսագէտ կենցաղին, ամուսնասիրութեան և տեսակ մը անծանօթ սո՛ւր ոգիի, որ ամէն տեղ և իբր ամէն ատեն կառաջնորդէ իրենց առեւտրական անցոյց յաջողութեանց։

Զմոռնանք ըսել որ տեղական եազմայի անօրինակ յաջողութենէն հրապուրեալ՝ կարգ մը օտարազգի վաճառականներ ձեռնարկեցին բերել Կ. Պոլիսի հրապարակը Զուիցերիայէն մեծաքանակ եազմայ՝ սկսելով 1853էն, և միջոց մը կասեցուցին տեղական եազմայի բանուկ եւ հաչակեալ տուրեւառը։ Հայք ստիպուեցան ընդ երկար մաքառիլ՝ առձեռն միջոցներով՝ այս խափանարար նորութեան դէմ և նման ճարտարութեանց (կաղապարով տը-